ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Էմմա Ավագյան
ԵՊՀ քրեական դատավարության և կիրմինալիստիկայի ամբիոնի հայցորդ

Խոշտանգումների դեմ պայքարի ուղղությամբ պետության պարտականությունն է անհապաղ արձագանքել մարդու իրավունքների խախտման յուրաքանչյուր դեպքի և արդյունավետ քննություն իրականացնել՝ վերականգնելու անհատի խախտված իրավունքները: Այս հիմնարար գաղափարն ամրագրված է միջազգային որոշ փաստաթղթերում[1]:

Սույն հոդվածի շրջանակներում անդրադառնալու ենք ՀՀ-ում խոշտանգումների վերաբերյալ հաղորդումների քննության, դրանց հիման վրա քրեական գործերի հարուցման առանձնահատկություններին, մասնավորապես այն հարցին, թե ինչպես պետք է իրավակիրառ պրակտիկայում իրացվեն միջազգային պայմանագրերից բխող իրավանորմերը, և ինչ դատավարական ընթացակարգերով պետք է խոշտանգումների վերաբերյալ հաղորդումները քննության առնվեն:

Քրեական գործ հարուցելու պարտականությունը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (այսուհետ նաև՝ քր. դատ. օր.), ըստ որի՝ հանցագործության հատկանիշների մասին բավարար տվյալների՝ օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում պետք է հարուցվի քրեական գործ:

Ինչպես նկատում ենք, քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված առիթների և հիմքերի առկայություն, սակայն չի բացահայտվում «քրեական գործ հարուցելու առիթ» և «քրեական գործ հարուցելու հիմք» հասկացությունները, այլ միայն թվարկվում է առիթների սպառիչ ցանկ:

Իրավաբանական գրականության մեջ այս հասկացությունների կապակցությամբ առկա են տարբեր մոտեցումներ: Քրեական գործ հարուցելու առիթը մի դեպքում բնորոշվում է որպես տեղեկություն հանցագործության հատկանիշների մասին, մեկ այլ դեպքում՝ տեղեկության աղբյուր, երրորդ դեպքում՝ որպես իրավաբանական փաստ կամ որպես գործողություն կամ որպես ապացույց[2]: Այնուամենայնիվ մասնագիտական գրականության մեջ առավել ընդունելի մոտեցումն այն է, որ քրեական գործ հարուցելու առիթը օրենքով նախատեսված աղբյուրներն են, որտեղից իրավասու պետական մարմինները և պաշտոնատար անձինք ստանում են հանցագործության մասին նախնական տեղեկություններ[3]:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ նույնպես անդրադարձել է քրեական

---

[1] Տե՛ս օրինակ՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա (հոդվածներ 12, 13), Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի ենթարկվելուց բոլոր անձանց պաշտպանության մասին հռչակագիր (հոդված 8), Որևէ ձևով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածու (սկզբունք 33) և այլն:

[2] Տե՛ս **Ա. Ղամբարյան, Վ. Շահինյան, Ա. Հովսեփյան**, Մինչդատական վարույթի հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում, Երևան, 2009, էջ 15:

[3] Տե՛ս **Р. Д. Рахунов**. Возбуждение уголовного дела в советском уголовном процессе. М.: 1954 էջ 31, Уголовно- процессуальное право РФ. Отв. ред. П. А. Лупинская- М.: Юристъ, 2003, էջ 352.

գործ հարուցելու առիթներին՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Հանցագործության մասին հաղորդումը որպես քրեական գործ հարուցելու առիթ իրենից ներկայացնում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի գրավոր կամ բանավոր դիմումը քրեական հետապնդում իրականացնող մարմնին՝ կոնկրետ հանցագործության տարրեր պարունակող նախապատրաստվող կամ կատարած հանցագործության մասին տեղեկատվությամբ:

Առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը լիազորում է իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց մտնել իրավահարաբերությունների մեջ, կատարել գործողություններ, որոնք իրենց միասնությամբ ներկայացնում են քրեական դատավարության սկզբնական փուլի գործունեություն:

Քրեական գործի հարուցման առիթները պետք է բովանդակեն տեղեկություն հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին: Միայն այս դեպքում դրանք կարող են հիմք հանդիսանալ ստուգելու և քրեական գործ հարուցելու կամ հարուցումը մերժելու որոշում ընդունելու համար: Այսինքն՝ քրեական գործ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն հանցագործության մասին արված հաղորդումը (...)»[1]:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, իր մեկ այլ որոշմամբ վերահաստատելով է. Կարապետյանի գործով ձևավորած իրավական դիրքորոշումը, այն զարգացրել է հետևյալ բովանդակությամբ. «(...) քրեական գործ հարուցելու ***առիթ ասելով պետք է հասկանալ օրենքով սահմանված այն աղբյուրը, որտեղից իրավասու պաշտոնատար անձը տեղեկություններ է ստանում նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործությունների մասին:*** Հանցագործության մասին ֆիզիկական անձի հաղորդումը, ուղղված հետաքննության մարմնին, քննիչին կամ դատախազին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի իմաստով քրեական գործ հարուցելու առիթ է, հետևաբար այդպիսի հաղորդման առկայությունն ինքնին առաջ է բերում քրեադատավարական իրավահարաբերություններ՝ կապված գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության հետ:

Միևնույն ժամանակ, հանցագործության մասին հաղորդումը, այդ թվում՝ ֆիզիկական անձի կողմից տրված, չի կարող լինել վերացական կամ ընդհանուր բնույթի: Որպեսզի հաղորդումը հիմք հանդիսանա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը կայացնելու համար, այն պետք է բովանդակի տվյալներ կոնկրետ հանցագործության մասին: Վերոգրյալը սակայն չի նշանակում, որ անձն իր հաղորդման մեջ պետք է ներկայացնի այնպիսի փաստական տվյալներ, որոնք իրենց բնույթով բավարար լինեն հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար»[2]:

ՀՀ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշումների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ հանցագործության մասին հաղորդումները պետք է բովանդակեն հստակ և կոնկրետ տեղեկություն տեղի ունեցած փաստի մասին, որը կհամապատասխանի քրեական օրենսգրքով արգելված արարքի (գործողության կամ անգործության) հատկանիշներին, և այն չպետք է բովանդակի վերացական բնույթի դատողություններ, այնուամենայնիվ դա չի նշանակում, որ հաղորդում ներկայացնող անձը պետք է ներկայացնի այնպիսի ամբողջական տեղեկություն, որը բավարար

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Է. Կարապետյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշումը:
[2] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Ռ.Նիազյանի վերաբերյալ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշում, կետ 20:

կլինի հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար:

Վճռաբեկ դատարանի՝ է. Կարապետյանի վերաբերյալ որոշմամբ արձանագրվել է ֆիզիկական անձանց կողմից ներկայացված հաղորդումների հիման վրա քրեադատավարական ընթացակարգ չսկսելու, դրանք անհետևանք թողնելու և հաղորդումներին գրությամբ պատասխանելու ընթացակարգ, այն դեպքում, երբ հաղորդումը չի լինի հիմնավորված և չի պարունակի արժանահավատ տվյալներ նախապատրաստվող կամ կատարված հանցագործության վերաբերյալ: Այլ կերպ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ներկայացված դիմումը հանցագործության մասին հաղորդում դիտելու և քրեադատավարական ընթացակարգեր սկսելու համար անհրաժեշտ պայման է, որ այն պարունակի նախապատրաստվող կամ արդեն կատարված հանցագործության հատկանիշների մասին արժանահավատ տեղեկություն, ինչն էլ հիմք է հանդիսանալու իրավասու մարմինների կողմից նյութեր նախապատրաստելու, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված սահմանափակ թվով քննչական գործողություններ կատարելու և համապատասխան որոշումներից որևէ մեկը կայացնելու համար:

Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշումներով արձանագրված դրույթները, մեր կարծիքով, խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ ներկայացված հաղորդումների վրա պետք է տարածվեն վերապահումներով, որովհետև պետությունը կրում է պոզիտիվ պարտականություն՝ բազմակողմանի և օբյեկտիվ քննություն իրականացնելու ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի յուրաքանչյուր դեպքի առնչությամբ:

Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդումները հնարավոր է՝ պարունակեն ընդհանրական բնույթի տեղեկություններ, սակայն նույնիսկ այդ դեպքում պետք է վարույթն իրականացնող մարմինները պարտավորություն ստանձնեն իրականացնելու համապատասխան քննչական և դատավարական այն բոլոր գործողությունները, որոնք տվյալ փուլում հնարավոր է՝ պարզելու համար քրեական գործ հարուցելու առիթն օրինակա՞ն է, և հիմքեր առկա՞ են, թե՞ ոչ: Միայն օրենսդրությամբ սահմանված քննչական և դատավարական գործողություններ կատարելու դեպքում հնարավոր կլինի հանգել ՀՀ քր. դատ. օր.-ի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևիցե մեկի կայացմանը: Անհրաժեշտ է բացառել ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդումներին գրությամբ պատասխանելու կամ այլ կերպ անհետևանք թողնելու պրակտիկան. յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է բոլոր միջոցները գործադրել՝ պարզելու համար հաղորդումներում առկա բովանդակության հավաստիությունը և արժանահավատությունը:

Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ գործող օրենսդրության պարագայում հաղորդումների իսկության, այսինքն՝ քրեական գործ հարուցելու հիմքի և առիթի ստուգման համար նախատեսված է սահմանափակ թվով գործողություններ կատարելու հնարավորություն: Այս պարագայում առավել խրթին է դառնում տվյալ հարցի լուծումը: Ուստի նպատակահարմար ենք համարում անհապաղ անհրաժեշտ գործողություններ կատարելուց հետո հարուցել քրեական գործ և ձեռնամուխ լինել ենթադրյալ խոշտանգման դեպքի բացահայտմանը:

Քննարկման առարկա պետք է դառնա նաև այն հարցը, թե ով իրավունք ունի ներկայացնել ենթադրյալ խոշտանգումների վերաբերյալ հաղորդում: Գործող օրենսդրությամբ դա կարող է անել ոչ միայն այն անձը, որը ենթադրյալ խոշտանգման տուժողն է, այլև ցանկացած այլ անձ, որն ունի դրա մասին տեղեկություններ: Այս մասով պետք է նշել, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը ոչ միայն համապատասխանում է միջազգային փաստաթղթերում ամրագրված նորմերին,

այլև ավելի մեծ երաշխիքներ է նախատեսում հանցագործությունների բացահայտման համար: Այսպես, միջազգային նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ պետությունների համար սահմանվում է պահանջ, որ խոշտանգման զոհերի կամ նրանց պաշտպանների կամ նրանց ընտանիքի անդամների կողմից հաղորդում ներկայացնելու դեպքում պետությունն անհապաղ ձեռնամուխ լինի ենթադրյալ խոշտանգման դեպքերի քննությանն ու բացահայտմանը, իսկ ՀՀ օրենսդրության պարագայում՝ ոչ միայն տվյալ անձի, այլև ցանկացած մեկի ներկայացրած հաղորդման դեպքում առաջանում է արդյունավետ քննություն իրականացնելու պահանջ:

Քեռադատավարական օրենսդրությունը քրեական գործ հարուցելու առիթների մեջ առանձնացնում է նաև վարույթն իրականացնող մարմինների կողմից իրենց լիազորությունների իրականացման կապակցությամբ հանցագործության մասին տվյալների հայտնաբերման հնարավորությունը:

Հետաքննության մարմինը և քննիչը հանցագործության մասին տեղեկություններ կարող են հայտնաբերել իրենց վարույթում եղած քրեական գործի քննության ընթացքում: Հետաքննության մարմինը հանցագործության հատկանիշներ կարող է հայտնաբերել նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս կամ վարչական գործունեության ընթացքում: Իսկ դատախազը հանցագործության մասին տվյալներ, հանցագործության նյութական հետքեր և հետևանքներ հայտնաբերում է նաև իր հսկողական լիազորություններն իրականացնելիս[1]:

Իսկ այն դեպքում, երբ իրենց վարույթում գտնվող գործի հետ չկապված այլ հանցագործություն են հայտնաբերում, ապա քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազն իրենց վարույթում գտնվող քրեական գործի նյութերով կայացնում են որոշում նոր գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին, իսկ դատարանը նման որոշում կայացնելու միջնորդությամբ դիմում է դատախազին, եթե մեղադրյալին վերագրվող հանցագործությունից բացի՝ բացահայտված է առաջինի հետ չկապված այլ հանցագործություն, որը կատարել է այլ անձ՝ առանց մեղադրյալի մասնակցության (քր. դատ. օր. հոդվ. 184, մաս 1):

Հատկապես հետաքրքրական է այն իրավիճակը, երբ դատաքննության ժամանակ ամբաստանյալը հայտնում է այն մասին, որ իր նկատմամբ կիրառվել է բռնություն նախաքննության ընթացքում կամ ավելի վաղ՝ ոստիկանության կողմից: Բանն այն է, որ հաճախ անձինք չեն վստահում այլ մարմինների և միայն հրապարակային դատաքննության ընթացքում են հայտնում իրենց նկատմամբ կիրառված բռնության մասին: Իհարկե լինում են նաև դեպքեր, երբ նրանց հայտնած տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը, կամ հնարավոր չի լինում բացահայտել ապացույցների անբավարարության պատճառով: Անյուամենայնիվ, պահանջվում է իրականցնել բազմակողմանի և լրիվ քննություն: Վերոգրյալի համատեքստում առաջնային է համարվում քննարկել այն իրավիճակը, թե ինչպես պետք է վարվի դատարանը, երբ ամբաստանյալից նման հայտարարություն է ստանում: Ինչպես արդեն նշվել է վերևում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (41-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 184-րդ հոդվածի 1-ին մասով) կարգավորվում է այդ հարաբերությունը, և դատարանը պարտավոր է նոր քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին: Դատարանը պարտավոր է միջնորդությամբ դիմել դատախազին ոչ միայն այն դեպքում, երբ անձը նման հայտարարությամբ է հանդես գալիս, այլև, երբ դատարանի մոտ առաջանում է կասկած, որ անձը ենթարկվել է բռնության (օրինակ՝ անձի մարմնի վրա կան բռնության հետքեր և այլն), այիսնքն՝ հայտնաբերում է հանցագործության ակնհայտ

[1] Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն: Հատուկ մաս: Երևան, 2019, էջ 27:

հատկանիշներ: Այդպիսի դիրքորոշում է հայտնել նաև Վճռաբեկ դատարանը Ա. Գզոյանի[1] վերաբերյալ գործով: Այսպես. «(…) եթե դատարաններն իրենց վարույթում գտնվող քրեական գործի քննության ընթացքում հայտնաբերում են հանցագործության ակնհայտ հատկանիշներ, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա պարտավոր են քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին»: Սույն գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ խոշտանգման վերաբերյալ հայտարարության դեպքում ծառայողական քննություն իրականացնելը չի կարող գնահատվել որպես խոշտանգման փաստի պատշաճ արձագանք: Ավելին, «(…) այս հարցում Վճռաբեկ դատարանը հիմք է [ընդունել] ՄԻԵԴ-ի դիրքորոշումն այն մասին, որ խոշտանգումը պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության և պատժի (առավել մանրամասն տե՛ս Bati and Others v. Turkey, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, 145-146 կետեր, Mikheev v. Russia, 2006 թվականի հունվարի 26-ի վճիռը, գանգատ թիվ 77617/01, 120 և 135 կետեր)»: Ա. Գզոյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանը գտել է, որ ստորադաս դատարանները թեև հաստատված են համարել, որ Ա. Գզոյանը ցուցմունքներ է տվել ֆիզիկական բռնության ազդեցության ներքո, և որ նա հայտարարել է իրեն խոշտանգելու մասին, այնուամենայնիվ չեն միջնորդել դատախազին՝ նրա նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ հայտարարությունը ստուգելու և այդ փաստի առթիվ քրեական գործ հարուցելու համար: Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ստորադաս դատարանների կողմից պատշաճ արձագանք չի տրվել անձի՝ իրեն խոշտանգելու մասին հայտարարությանը, և արդյունքում խախտվել է տվյալ անձի՝ Կոնվենցիայով և Սահմանադրությամբ երաշխավորված կարևորագույն իրավունքը: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Ա. Գզոյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանը երկու իրավական դիրքորոշում է ձևավորել, որոնք պարտադիր են դարձել իրավակիրառ պրակտիկայի համար, դրանք են՝

1) դատարանում խոշտանգման կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ հայտարարություն ստանալու կամ տվյալ հանցագործության վերաբերյալ ակնհայտ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում դատարանը պարտավոր է քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին,

2) խոշտանգման կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ հայտարարության դեպքում ծառայողական քննությունը չի կարող համարվել բավարար, այլ արդյունավետ քննություն իրականցնելու հիմնարար պահանջից բխում է, որ անհրաժեշտ է հարուցել քրեական գործ և իրականացնել բազմակողմանի քննություն:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայումս, որպես կանոն, դատաքննության ժամանակ հնչեցված խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքերին տրվում է համարժեք արձագանք, մասնավորապես՝ դատարանները միջնորդություն են ներկայացնում դատախազին քրեական գործ հարուցելու և բազմակողմանի քննություն իրականացնելու համար: Ներկայացնենք դատական պրակտիկայից ևս մի օրինակ: Այսպես, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ ըստ մեղադրանքի Ա.Գ-ի և մյուսների՝ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի, 258-րդ հոդվածի 4-րդ մասի, 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով քննվող թիվ ԵԿԴ/0025/01/16 քրեական գործով 09.11.2016թ. կայացած դատական նիստի ընթացքում ամբաստանյալ Ա.Գ-ն հայտարարություն է արել, որ իրեն ծեծի են ենթարկել ՀՀ ոստիկա-

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Արայիկ Գզոյանի վերաբերյալ 2010 փետրվարի 12-ի թիվ ԵԱՔԴ/0049/01/09 քրեական գործով որոշում, կետեր 25, 29-31:

նության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի աշխատակիցները: Դեպքի մասին 2016 թվականի նոյեմբերի 28-ին ՀՀ գլխավոր դատախազության դատախազը զեկուցագիր է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայություն, ինչի առթիվ նախապատրաստվել են նյութեր, և 06.12.2016 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, իրականացնելով համապատասխան քննություն, 2017 թվականի փետրվարի 9-ին որոշում է կայացրել ոստիկանների նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին՝ նրանց արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով նախատեսված, ինչպես նաև պետական ծառայության դեմ ուղղված որևէ այլ հանցագործության դեպքի բացակայության հիմքով: Նշված և բազմաթիվ այլ դատական վարույթների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ այն դեպքում, երբ դատարանները միջնորդություն են ներկայացնում խոշտանգումների փաստի առթիվ քրեական գործ հարուցելու համար, ապա իրենց վարույթում գտնվող գործի քննության ընթացքը չի կասեցվում, այլ շարունակում են իրականացնել դատաքննություն, իսկ հետագայում էլ կայացնում են դատավճիռ: Իհարկե պետք է փաստենք նաև, որ այդ գործերով մինչև դատավճիռ կայացնելը ՀՀ հատուկ քննչական ծառայությունում խոշտանգումների փաստի առթիվ հարուցված քրեական գործերով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումներ են կայացվել: Այնուամենայնիվ, կարծում ենք, այն դեպքում, երբ դատարանը միջնորդություն է ներկայացնում դատախազին քրեական գործ հարուցել խոշտանգումների փաստի առթիվ, անհրաժեշտություն է առաջանում դատարանի վարույթում գտնվող գործը, որով ամբաստանյալը կամ դատավարության այլ մասնակիցը հայտնել է իրեն խոշտանգելու փաստի մասին կասեցնել և սպասել խոշտանգման կամ վատ վերաբերմունքի փաստի առիթով հարուցված քրեական գործի լուծմանը, քանի որ այդ փաստի հաստատման դեպքում տվյալ ապացույցները կճանաչվեն անթույլատրելի: Այլ կերպ՝ դատարանն իր վարույթում գտնվող գործով չի կարող կայացնել օրինական և հիմնավորված որոշում, երբ խոշտանգման փաստի առթիվ իր միջնորդության հիման վրա հարուցված քրեական գործը գտնվում է դեռևս քննության փուլում, և չկա դրա վերաբերյալ կայացված վերջնական որոշում: Սա ուղղակի վտանգի տակ է դնում դատարանի կայացրած դատական ակտը, քանի որ հնարավոր է՝ ապացուցված համարվի խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի կիրառման փաստը: Սույն վերլուծության լույսի ներքո գտնում ենք, որ անհրաժեշտություն է առաջանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան լրացում և քրեական գործի վարույթը կասեցնելու հիմքերի մեջ ավելացնել նորը, այն է՝ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի փաստի առթիվ դատարանի ներկայացրած միջնորդության հիման վրա դատախազի կողմից քրեական գործ հարուցելու հանգամանքով քրեական գործի վարույթը կասեցնելը՝ մինչև համապատասխան գործով վերջնական որոշում կայացնելը:

Հարկ ենք համարում նաև նշել, որ ներկայումս Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզ, և Արդարադատության նախարարը ժամանակ առ ժամանակ չնախատեսված այցեր են կատարում անձին անազատության մեջ պահելու վայրեր և հնարավորություն են ունենում տեղում ծանոթանալու եղած իրավիճակին: Սա մեծ հնարավորություն է տալիս վերջիններիս ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքերի հայտնաբերման առնչությամբ հաղորդում ներկայացնելու իրավասու մարմիններին:

Կարծում ենք, որ անհարժեշտություն է առաջանում բոլոր պետական մարմինների համար սահմանել պարտականություն, որ իրենց լիազորություններն իրակա-

նացնելիս ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ դեպքերի հայտնաբերման ժամանակ համապատասխան հաղորդումներ ներկայացնեն իրավասու մարմիններին, իսկ որպեսզի այս նորմը դեկլարատիվ չմնա, առնվազն կարգապահական պատասխանատվություն նախատեսել այն բոլոր պետական մարմինների համար, որոնք չեն կատարի դա: Սա հնարավորություն կտա ավելի արդյունավետ պարքար մղել խոշտանգումների դեմ:

Օրենսդրությամբ նախատեսված հաջորդ առիթը լրատվության միջոցներից ստացված հաղորդումներն են: Լրատվության միջոցների հաղորդումներ են կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին հաղորդումները մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ, ինչպես նաև լրատվության միջոցներին հասցեագրված և չհրապարակված հաղորդակցություններում (քր. դատ. օր., հոդված 179, մաս 1): Օրենսդրական պարտադիր պահանջ նախատեսված չէ, որ լրատվության միջոցները հանցագործության մասին տեղեկություններն ուղարկեն իրավասու մարմիններին, բավական է նաև այն, որ այդ տեղեկությունը հրապարակված լինի համապատասխան զանգվածային լրատվության միջոցում, և դա հիմք է, որ վարույթն իրականացնող մարմինները դրանք ստուգեն և անհրաժեշտության դեպքում նյութեր նախապատրաստեն:

Օրենսդրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այնտեղ ներառված չեն լրատվության բոլոր միջոցները: Այսպես, վերոհիշյալ նորմում սպառիչ թվարկվում են այն լրատվության բոլոր միջոցները, որոնցով հնարավոր է հանցագործության մասին հաղորդում ներկայացնել, մասնավորապես այդպիսիք են մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը: Ինչպես նկատում ենք, նշվածների մեջ չկա համացանցը, սակայն հասարակական հարաբերությունների զարգացման ներկայիս պայմաններում բավականին արդիական է դարձել այնտեղ տարբեր տեղեկություններ հրապարակային դարձնելը: Այս դեպքում անհնարին է դառնում զերծ մնալ համացանցով հանցագործության մասին տեղեկություն ստանալուց: Այսպես, հաճախ նկատում ենք՝ տարբեր կայքերում հրապարակային է դառնում որևէ անձի կողմից ինչ-որ արարք կատարած լինելու հանգամանքը, ինչն իր բնույթով կարող է հանցագործություն համարվել: Այս դեպքում հարց է առաջանում, թե վարույթ իրականացնող մարմինները ինչպես պետք է վարվեն նման տեղեկության հետ: Այսինքն՝ ստացվում է մի իրավիճակ, երբ բացակայում է հանցագործության մասին հաղորդումը, բայց առկա է տեղեկություն հանցագործության մասին: Այս խնդրի լուծման նպատակով առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ և ընդգրկել լրատվական այն բոլոր հնարավոր միջոցները, որոնցով կարող է տարածվել հանցագործության մասին տվյալներ: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում անհրաժեշտ է բացառել լրատվության միջոցների սպառիչ թվարկումը, բացի այդ՝ անհրաժեշտ է գործածել «զանգվածային լրատվության միջոց» արտահայտությունը, որը կբացառի նման թյուրըմբռնումը, քանի որ «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ զանգվածային լրատվության միջոցը լրատվություն իրականացնելու միջոց է, որը բաժանորդագրությամբ կամ առանց դրա, վճարովի կամ անվճար հիմունքներով տարածվում է՝

- մշտական անվանում, հերթական համար և ամսաթիվ ունեցող պարբերական թողարկումներով՝ նյութական կրիչի վրա, որոնց միևնույն բովանդակությամբ օրինակների քանակը պակաս չէ հարյուրից,
- հեռուստառադիոհաղորդմամբ,
- հանրային հեռահաղորդակցության ցանցով (ցանցային լրատվության միջոց)՝ որպես որոշակի հասցե ունեցող, անսահմանափակ թվով անձանց համար հասանելի և լրատվություն ներառող տեղեկատվական պաշար՝ անկախ թարմացման պար-

բերականությունից, պահման ժամանակի տևողությունից և այլ չափանիշներից:

Ասվածը հատկապես կարևորվում է խոշտանգումների բացահայտման տեսանակյունից, քանի որ հաճախ հենց համացանցի միջոցով ենք տեղեկանում հասարակական կարգը պահպանողների կողմից բռնություն կիրառելու դեպքերի մասին: Իհարկե դա միայն կարող է առիթ դառնալ քննություն իրականացնելու համար, այնուամենայնիվ այն խոշտանգումների դեմ պայքարելու մեծ երաշխիք է:

Քրեական գործ հարուցելու համար բավարար չի կարող համարվել միայն առիթների առկայությունը, այլ անհրաժեշտ են նաև բավարար հիմքեր:

Իրավաբանական գրականության մեջ քրեական գործ հարուցելու հիմքերի մասով ևս չկա միասնական մոտեցում: Այսպես, հեղինակների մի մասի կարծիքով, քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ է հանցագործությունը որպես հանրային վտանգավոր արարք բնութագրող բոլոր տարրերի առկայությունը[1]: Հեղինակների մյուս մասն էլ առավել ընդունելի է համարում այն մոտեցումը, որ քրեական գործ հարուցելու հիմքը օրենքով սահմանված առիթներում տեղ գտած այն փաստական տվյալներն են, որոնք վկայում են հանրային վտանգավոր արարքի առկայության մասին[2]: Մենք համակարծիք ենք այն հեղինակների հետ, որոնք գտնում են, որ քրեական գործի հարուցման համար բավարար են այն տվյալները, որոնք վկայում են հանցագործության փաստի, այսինքն՝ նրա օբյեկտիվ կողմի և օբյեկտի առկայության մասին[3]:

---

[1] Տե՛ս **М. А.Чельцов.** Советский уголовный процесс. М., 1962, էջեր 233-236:

[2] Տե՛ս **Г. В. Матусевич.** Поводы и основания для возбуждения уголовного дела. Автореф. Дисс. канд. юрид. наук. М. 2004. **К. В. Муравьев** Возбуждение уголовного дела в отношении лица. Автореф. дисс. … канд. юрид. наук. Омск, 2005.

[3] Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն, էջ 29: **Ա. Ղամբարյան, Վ. Շահինյան, Ա. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 27:

ОСОБЕННОСТИ ВОЗБУЖДЕНИЯ УГОЛОВНОГО ДЕЛА ПО ФАКТУ ПЫТОК

Эмма Авагян
Соискатель кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

Государство обязано бороться с пытками и оперативно реагировать на любые нарушения прав человека и проводить эффективное расследование путем восстановления нарушенных прав человека.

Работа посвящена особенностям этапа возбуждения уголовного дела по факту пыток. В рамках данной статьи автор ссылалается на рассмотрение сообщений о пытках в Республике Армения и на особенности возбуждения уголовного дела на их основе. Автор также представил поводы и основания для возбуждения уголовного дела, а также исследовал пробелы в законодательстве и предложил адекватные решения.

PECULIARITIES OF INITIATING A CRIMINAL CASE ON THE FACT OF TORTURE

Emma Avagyan
Applicant at the YSU Chair of Criminal Processing and Criminalistics

It is the duty of the State to combat torture and to respond promptly to any violation of human rights and to carry out an effective investigation by restoring violated human rights.

The work is dedicated to the peculiarities of the stage of initiating a criminal case on torture. Within the scope of this article, the author referred to the examination of reports of torture in the Republic of Armenia and the peculiarities of instituting criminal proceedings on the basis of them. The author also presented the reasons and grounds for initiating a criminal case, as well as explored legislative gaps and suggested adequate solutions.

Բանալի բառեր – *խոշտանգում, արդյունավետ քննություն, քրեական գործ հարուցելու առիթ, քրեական գործ հարուցելու հիմք, քրեական գործ հարուցելը, պարտականություն, հանցագործության մասին հաղորդում*
Ключевые слова - *пытка, эффективное расследование, поводы для возбуждения уголовного дела, основания для возбуждения уголовного дела, возбуждение уголовного дело, обязанность, заявления о преступлениях*
Key words - *torture, effective investigation, reasons for initiating a criminal case, grounds for initiating a criminal case, initiating a criminal case, duty, the statement about crime*